ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/10

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Վարբադ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 03.03.2021թ.),

քննելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթակարգի շրջանակներում «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից 02.03.2021թ. ներկայացված (03.03.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/10 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Վարբադ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 02.03.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «Առանցքակալների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վարբադ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության (կցվում է) 6 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից առաջարկած ապրանքի ԳՈՍՏ-երը պետք է համապատասխանեցնել հրավերի տեխնիկական բնութագրին:

Նույն արձանագրության նույն կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել անհամապատասխանությունների շտկման հնարավորություն տրամադրվել է միայն «Դավիթ-94» ՍՊԸ, «ԷՆԵՐՍԻՍ» ՍՊԸ և «ՀԱԿ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին:

Մասնավորապես, վերոհիշյալ կետով գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել առաջարկել «Դավիթ-94» ՍՊԸ, «ԷՆԵՐՍԻՍ» ՍՊԸ և «ՀԱԿ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին (բացի «Վարբադ» ՍՊԸ-ից) մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.02.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության (կցվում է)՝ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, այն հիմքով, որ շտկման արդյունքում «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հիմնավորում, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի ընդունվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.–ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից առաջարկած ապրանքի ԳՈՍՏ-երը պետք էր համապատասխանեցնել հրավերի տեխ-բնութագրին:

Սակայն, անհասկանալի կերպով գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել անհամապատասխանությունների շտկման հնարավորություն տրամադրել միայն «Դավիթ-94» ՍՊԸ, «ԷՆԵՐՍԻՍ» ՍՊԸ և «ՀԱԿ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին, իսկ «Վարբադ» ՍՊԸ-ին շտկման հնարավորություն չի տրամադրվել, ավելին, նման առաջարկ չի ներկայացվել:

Փաստորեն ներկա իրավիճակում բացակայում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձաժողովի կողմից կայացրած որևէ որոշում, որով «Վարբադ» ՍՊԸ-ին ներկայացվել է պահանջ կատարելու շտկում:

Ավելին, գնահատող հանձնաժողովը շտկում կատարելու որոշման բացակայության պայմաններում «Վարբադ» ՍՊԸ-ին անգամ էլեկտրոնային եղանակով չի ծանուցել և պահանջել ներկայացնել շտկված փաստաթղթեր, այլ ընդամենը 17.02.2021թ. ուղարկել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 2 արձանագրությունը՝ էլ. նամակը անվանելով՝ արձանագրություն համար 2՝ հայտերի բացման և գնահատման նիստի մասին, որտեղ ինչպես արդեն նշել ենք, բացակայել է որոշում՝ «Վարբադ» ՍՊԸ-ից շտկում պահանջելու վերաբերյալ (արտատպումը կցվում է):

Արդյունքում «Վարբադ» ՍՊԸ-ն բանավոր կերպով գնահատող հանձնաժողովից տեղեկացել է, որ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունը շտկման ենթակա չէ և այդ իսկ պատճառով «Վարբադ» ՍՊԸ-ին շտկման հնարավորություն չի տրամադրվել, որին ի պատասխան «Վարբադ» ՍՊԸ-ն, այնուամենայնիվ, ներկայացրել է մասնագիտական հիմնավորում՝ հույս ունենալով, որ գնահատող հանձնաժողովը կվերանայի իր դիրքորոշումը:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.02.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության՝ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, այն հիմքով, թե շտկման արդյունքում «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հիմնավորում, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի ընդունվել:

Այսինքն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ՍՊԸ-ին չտրամադրելով շտկման հնարավորություն՝ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար, մինչդեռ բոլոր այն մասնակիցների մոտ՝ որոնց հայտում արձանագրվել էր անհամապատասխանություն, որոշում էր կայացվել տրամադրել շտկման հնարավորություն, մինչդեռ «Վարբադ» ՍՊԸ-ի մասով նման որոշումը բացակայել է:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անհասկանալի և անհիմն գործողությունների հետևանքով խախտվել է Կարգի 41-րդ կետի պահանջները, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ

հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է.

1. Դադարեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընդունած որոշումը՝ «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում, որով «Վարբաղ» ՍՊԸ-ին կառաջարկվի մեկ աշխատանքային օրում կատարել շտկում՝ ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանության մասով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.03.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

<u>2. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 09.03.2021թ. թիվ Ε/40/555-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով ս/թ փետրվարի 08-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման

ընթացակարգը, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «Վարբադ» ՍՊԸ-ն:

«Վարբադ» ՍՊԸ-ի մասնակցության հայտի գնահատման արդյունքում հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-երը՝ (ГОСТ 520-2011) համարժեք են հրավերով նախատեսված ապրանքների ԳՈՍՏ-երին (ԳՈՍՏ 8328 և 8338), սակայն, այդ համարժեքությունը հիմնականում վերաբերում է ապրանքների հիմնական չափերին՝ բացառությամբ փորվածքների (фаска), որի անհամապատասխանության դեպքում տեղադրման, հավաքման և աշխատանքի որակները կարող են փոփոխության ենթարկվել, որը սարքավորման անձնագրով չի թույլատրվում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ ս/թ փետրվարի 17-ի թիվ 2 որոշմամբ գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել «Վարբադ» ՍՊԸ-ին և ընթացակարգի մյուս մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Գնահատող հանձնաժողովի ս/թ փետրվարի 19-ի թիվ 3 (կասեցված նիստի վերսկսում) նիստի ժամանակ հանձնաժողովը արձանագրեց, որ «Վարբադ» ՍՊԸ-ն մինչև կասեցման ժամկետի ավարտը ներկայացրել է համարժեքությունը հավաստող փաստաթուղթ, որ իր կողմից առաջարկած ապրանքի ԳՈՍՏ-երը համապատասխան են հրավերով սահմանված ապրանքների ԳՈՍՏ-երին:

Ի պատասխան «Վարբադ» ՍՊԸ-ի այն պնդմանը, որ հանձնաժողովի կողմից շտկման հնարավորություն չի տրամադրվել և նման առաջարկ չի արվել, հայտնում ենք, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը որոշել է և ներկայացված հայտերի մասին տվյալների բաժնում արձանագրել է «Վարբադ» ՍՊԸ-ի հայտում առկա անհամապատասխանությունը, սակայն տեխնիկական վրիպակի պատճառով արձանագրության ամփոփման հատվածում «Վարբադ» ՍՊԸ-ի անունը չի գրանցվել մյուս մասնակիցների անունների կողքին, այնուհանդերձ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է անհամապատասխանության վերաբերյալ իր հիմնավորումը, որը հանձնաժողովի կողմից բավարար չի գնահատվել:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված

անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, մերժել է «Վարբաղ» ՍՊԸ-ի մասնակցության հայտը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ «Վարբաղ» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ գնահատող հանձնաժողովը գործել է բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերով՝ ապահովելով գնման գործընթացի մրցակցային, համաչափ և ոչ խտրական կազամկերպումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.03.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Վարբաղ», «Դավիթ-94», «Էներսիս» և «ՀԱԿ ԳՐՈՒՓ» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-երը չեն համապատասխանել հրավերի տեխնիկական բնութագրին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ «Դավիթ-94», «Էներսիս» և «ՀԱԿ ԳՐՈՒՓ» ՍՊ ընկերություններին առաջարկելով ծանուցումը

ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 18.02.2021թ. ժամը 16:30-ը, շտկել անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 17.02.2021թ. Ընկերության էլեկտրոնային փոստին՝ vvarbad@mail.ru, ուղարկել է ««ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգ: արձանագրություն համար 2՝ հայտերի բացման և գնահատման նիստի մասին» վերնագրով էլեկտրոնային նամակ՝ կցելով Արձանագրություն_2-9-21.pdf ֆայլը, այն է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ հայտերի բացման և գնահատման նիստը կասեցվել էր և մասնակիցներին հնարավորություն էր տրվել շտկման: Համապատասխանության փոխարեն «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հիմնավորում, որ իր կողմից առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-երը համարժեք են հրավերով սահմանված ԳՈՍՏ-երին, որպիսի հիմնավորումը հանձնաժողովի կողմից չի ընդունվել և որոշում է կայացվել «Վարբադ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից 02.03.2021թ. ներկայացված բողոքը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Վարբադ», «Դավիթ-94», «Էներսիս» և «ՀԱԿ ԳՐՈՒՓ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-երը չեն համապատասխանել հրավերի տեխնիկական բնութագրին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ «Դավիթ-94», «Էներսիս» և «ՀԱԿ ԳՐՈՒՓ» ՍՊ ընկերություններին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 18.02.2021թ. ժամը 16:30-ը, շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 17.02.2021թ. Ընկերության էլեկտրոնային փոստին՝ vvarbad@mail.ru, ուղարկել է ««ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնման ընթացակարգ: արձանագրություն համար 2՝ հայտերի բացման և գնահատման նիստի մասին» վերնագրով էլեկտրոնային նամակ՝ կցելով Արձանագրություն_2-9-21.pdf ֆայլը, այն է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ հայտերի բացման և գնահատման նիստը կասեցվել էր և մասնակիցներին հնարավորություն էր տրվել շտկման: Համապատասխանության փոխարեն «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հիմնավորում, որ իր կողմից առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-երը համարժեք են հրավերով սահմանված ԳՈՍՏ-երին, որպիսի հիմնավորումը հանձնաժողովի կողմից չի ընդունվել և որոշում է կայացվել «Վարբադ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետը հստակ սահմանում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում ***արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ***ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, սակայն,*** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում արձանագրել, որ ***Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, արձանագրելով Ընկերության կողմից առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-երի անհամապատասխանությունը հրավերի տեխնիկական բնութագրին, որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ «Դավիթ-94», «Էներսիս» և «ՀԱԿ ԳՐՈՒՓ» ՍՊ ընկերություններին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 18.02.2021թ. ժամը 16:30-ը, շտկել անհամապատասխանությունը, այսինքն՝ այդ որոշմամբ չի անդրադարձել և չի առաջարկել «Վարբադ» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը, այնուհետև Ընկերության էլ. փոստին ուղարկել է հենց այդ՝ թիվ 2 արձանագրությունը, համաձայն որի՝ վերջինիս շտկում կատարելու***

պահանջ չի ներկայացվել, ինչի արդյունքում վերջինս զրկվել է օրենքով իրեն վերապահված իրավունքն իրացնելու, այն է՝ մինչև նիստի կասեցման ժամկետի ավարտը անհամապատասխանությունը շտկելու հնարավորությունից, և արդյունքում հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունները մեկնաբանվել են ի վնաս Ընկերության և հանգեցրել վերջինիս հայտն անբավարար գնահատելուն:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը, այն է՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում ***արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ***ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, որպիսի պայմաններում գտնում եմ, որ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վարբադ» ՍՊԸ-ի կողմից 02.03.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1. Դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված որոշումը՝ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ:

2. Ընդունել որոշում, որով «Վարբադ» ՍՊԸ-ին կառաջարկվի մեկ աշխատանքային օրում կատարել շտկում՝ ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանության մասով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**